## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՏԱՇՐՋԱՆԸ

Փետրվարի 28-ին սկսվեց Երևանի պետական Համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի տարեկան հաշվետու գիտական նստաշրջանը, որը տևեց հինգ օր։

Առաջին օրը, առավոտյան պլենար նիստում, Համալսարանի ռեկտոր պրոֆ. Մ. Ներսիսյանի ներածական խոսքից հետո լսվեցին գիտական զեկուցումներ։ Առաջինը՝ «Հայաստանը կենտրոնական միջերկրածովային սիստեմում» թեմայով հանդես եկավ պրոֆ. Հ. Մազաբյանը։ Տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ պրոֆ. Գ. Սահակյանի զեկուցումը նվիրված էր գերխիտ երկնային մարմինների տեսության հարցերին, իսկ պրոֆ. Մ. Տեր-Միքայելյանը և դոց. Ռ. Ղազարյանը ունկնդիրներին ծանոթացրին օպտիկական կանալների միջով ինֆորմացիայի հաղորդման հնարավորությունների հարցին։

Նույն օրը, երեկոյան պլենար նիստում, լսվեցին պրոֆեսորներ Գ. Սեսակի «Գրական լեզու և գրականության լեզու», Հ. Գաբրիելյանի «Ազգի սահմանման հարցի շուրջը», Մ. Ներսիսյանի «Առաջին հայ ուտոպիա-սոցիալիստը» և Մ. Մկրչյանի «Հայ հին գրականության սկզբնավորման հարցի շուրջը» թեմաներով ուշագրավ զեկուցումները։

Մարտի 1—4-ը նստաշրջանի 6 գիտական բաժանմունքների 16 սեկցիաներում կարդացվեցին մոտ 150 զեկուցումներ։ Առանձնապես ունկնդիրների ակտիվ մասնակցությամբ և գիտական բարձր մակարդակով անցան մաթեմատիկայի, քիմիայի, մեխանիկայի, պատմության, կենսաբանության, լեզվագիտության և այլ սեկցիաների նիստերը։

Արժանի են հիշատակման հատկապես պրոֆեսորներ Ա. Թալալյանի («Միջոցներ, որոնցով կազմված շարքերը ներկայացնում են բոլոր չափերի ֆունկցիաները»), Ս. Պողոսյանի («Հայաստանում ֆեոդալիզմի առաջացման հարցի շուրջը»), դոց. Գ. Բեզիրգանյանի և Ա. Ակրիտովի («Լենինգրադյան հատագայթների դիֆրակցիայի օպտիկական սկզբունքների նորագույն հարցերը»), դոց. Կ. Զորանյանի («Բաղադրյալ ձողերի լարումների կոնցենտրացիայի մասին») և բազմաթիվ այլ զեկուցումներ, որոնք աչքի ընկան իրենց խոր վերլուծություններով ու կարևոր եզրահանգումներով։

Համալսարանի հաշվետու տարեկան նստաշրջանը, որն ամփոփեց բուհի գիտնականների մեկ տարվա գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, մեծ հետաքրքրություն առաջացրեց մայրաքաղաքի գիտական հասարակայնության մեջ։

Թ. ԳԱԼՈՅԱՆ

## ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ

*Փետրվարի 21-ին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ մեծարման երեկո, որը կազմակերպված էր ակադեմիայի նախագահության և ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի կողմից և նվիրված էր պետական ու կուսակցական հին գործիչ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Կարինյանի ծննդյան 80 և կուսակցական-հասարակական ու գրական-գիտական գործունեության 60-ամյակին։*

*Երեկոն ներածական խոսքով բացեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը։ Հորելյարի կյանքի ու գործունեության մասին զեկուցեց մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի դիրեկտոր, գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Սատուր Աղայանը։*

*Արտաշես Կարինյանը (Գարրիելյան) ծնվել է 1886 թ. նոյեմբերի 11-ին (նոր տոմարով նոյեմբերի 24-ին) Բալախանիում՝ Անդրկովկասի պրոլետարական կենտրոն Բաքվի արվարձանում։ Նրա հայրը՝ Բալասի Գարրիելյանը, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքից Բաքու եկած քարտաշի որդի էր և ծառայում էր նավթահանքերում։ Պատանի Արտաշեսը վերջացրել է Բաքվի առաջին գիմնազիան։ Ապա 1906 թ. մտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որը ավարտել է 1910 թ.։*

*Ա. Բ. Կարինյանը անցել է հեղափոխական գործչի երկար ուղի։ Իր հասարակական-քաղաքական կյանքը նա սկսել է շատ վաղ հասակից, երիտասարդական տարիներից ակտիվ մասնակցություն է ունեցել հեղափոխական շարժմանը որպես պրոպագանդիստ և ընդհատակյա խմբակների ղեկավար։ Սկսած 1906 թ. նա բոլշևիկ-*

վիկյան մամուլի էջերում հանդես է եկել հակամարքսիստական զանազան հոսանքների դեմ։

1907 թ. Կարինյանը ծանոթանում է կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ Ստեփան Շահումյանի հետ։ Շահումյանի, Սպանդարյանի, Ջափարիձեի, Կասպարովի հետ մտերմությունը վճռական նշանակություն ունեցավ Կարինյանի կյանքում։ Շահումյանի անմիջական ազդեցությամբ նա հանդես եկավ հակալենինյան հոսանքների դեմ, պաշտպանելով ՌՍԴԲԿ սկզբունքները, պրոպագանդելով լենինյան գաղափարները հայ իրականության մեջ։



1907 թ. աշնանը Կարինյանը Պետերբուրգի մի խումբ կովկասցի ուսանողների հետ մասնակցում է Պետերբուրգի բոլշևիկյան կոմիտեի կազմակերպած հայտնի ժողովին, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 30-ին Տերիոկիում (Ֆինլանդիա). այստեղ Կարինյանը առաջին անգամ տեսավ Վ. Ի. Լենինին և լսեց նրա հաղորդումը ընթացիկ մոմենտի մասին։

1907—1910 թթ. Կարինյանը հայ պարբերական մամուլի էջերում («Բակինսկի ռաբոչի», «Նոր խոսք») հանդես է եկել դրական-հրապարակախոսական հոդվածներով։ Գրական-հասարակական գործունեությանը զուգընթաց նա ակտիվ մասնակցություն է ունեցել Անդրկովկասում տարվող հեղափոխական պայքարին։ Նա պայքարել է հայ, աղրբեջանցի, վրացի և Կովկասի բոլոր ազգերի աշխատավորության ինտերնացիոնալ համախմբման համար։

1913 թ. նավթարդյունաբերական բանվորների ընդհանուր գործադուլի նախապատրաստմանը ակտիվորեն մասնակցելու համար Կարինյանը մի խումբ բոլշևիկ բանվորների հետ միասին ձերբակալվում է և աքսորվում Ցարիցին, որտեղից մեկնում է Պետերբուրգ, ուր մնում է մինչև 1917 թ. աշունը։

1914—1916 թթ. Կարինյանը բազմաթիվ հոդվածներ ու գրախոսականներ է տպագրել «Պրավդա» և «Պայքար» թերթերում։ 1917 թ. ապրիլի 3-ին նա Պետրոգրադի Ֆինլանդական կայարանում տեսել է մեծ Լենինին և լսել նրա հռչակավոր ճառը։ Սեպտեմբերին Կարինյանը Բաքվի բոլշևիկների հանձնարարությամբ մասնակցել է «Դեմոկրատական խորհրդակցությանը», որպես բոլշևիկների ֆրակցիայի անդամ։

1917 թ. հոկտեմբերին Կարինյանը վերադարձել է Բաքու և մասնակցել Բաքվի կոմունայի ստեղծմանը։ Շահումյանի և Ջափարիձեի առաջարկությամբ Կարինյանը նշանակվել է «Բաքվի սովետի տեղեկագրի» խմբագիր, այդ թերթում տպագրելով բազմաթիվ հոդվածներ։ Ուշագրավ է նրա «Քաղաքական ինքնավարությունը և դեմոկրատիան» գրքույկը, որը գրվել է Շահումյանի հանձնարարությամբ ու հրատարակվել Բաքվում 1918 թ. սկզբին։ Կարինյանը ՌԿ(բ)Կ Բաքվի կոմիտեի անդամության թեկնածու էր, Բաքվի սովետի և նրա գործադիր կոմիտեի անդամ, իսկ 1918 թ. ապրիլից Շահումյանի գլխավորած Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետի արդարադատության ժողովրդական կոմիսարն էր։

Բաքվի կոմունայի անկումից հետո Կարինյանը աշխատել է Մոսկվայում՝ ՌՍՖՍՀ Ազգությունների ժողովրդական կոմիսարիատի Հայկական գործերի կոմիսարիատում որպես հրատարակչության վարիչ, խմբագրել է հայկական «Կոմունիստ» ամսագիրը և «Կարմիր դրոշ» թերթը։ Այնուհետև նա գործուղվում է Պետրոգրադ, որտեղ ղեկավարում է Նարվա-Պետերգոֆյան շրջանի կուսակցական դպրոցը։

1921 թ. Կարինյանը գործուղվում է աշխատանքի Սովետական Հայաստան։ Այստեղ նա երկար տարիներ աշխատում է որպես հանրապետության արդարադատության ժողկոմ, ՀՍՍՀ Կենտգործկոմի անդամ, Կենտգործկոմի նախագահի տեղակալ, ապա նախագահ, ՀԱՄԿ(բ)Կ Անդրերկրկոմի, Անդրկովկասյան Ֆեդերացիայի Կենտգործկոմի նախագահության և Սովետական Միության Կենտգործկոմի անդամ։

Պետական և կուսակցական գործունեության հետ մեկտեղ Կարինյանը Թբիլիսիի ու Երևանի բուհերում կարդացել է բազմաթիվ զեկուցումներ և դասախոսություններ, պրոպագանդելով պրոլետարական ինտերնացիոնալիզմը և ժողովուրդների բարեկամությունը։

1943 թ. Արտաշես Կարինյանը գիտական աշխատանքի է անցել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտում։

1934 թ. հրատարակվեց Ա. Կարինյանի երկերի ժողովածուի առաջին հատորը, ուր զետեղված են հայ և ռուս բոլշևիկյան մամուլի էջերում նրա տպագրած հրապարակախոսական հոդվածները։ 1956 և 1960 թթ. լույս տեսան Կարինյանի ստվարածավալ «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» 4-հատորյակի առաջին և երկրորդ հատորները։ Մեծ են նրա ծառայությունները նաև հանրապետության գրականագիտական կադրերի պատրաստման գործում։

1956 թ. Արտաշես Կարինյանը ընտրվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս. 1960—1963 թթ. նա եղել է ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, իսկ 1963—1965 թթ. ակադեմիայի փիցե-պրեզիդենտ։

1960—1963 թթ. Ա. Կարինյանը ՍՍՀՄ Մինիստրների սովետին կից լենինյան մրցանակաբաշխության պետական կոմիտեի անդամ էր։ Հայաստանի կոմունիստական կուսակցության XXII, XXIII և XXIV համագումարներում նա ընտրվել է Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեի անդամ։ 1905 թ. ռուսական հեղափոխության 50-ամյակի կապակցությամբ նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր գրոշի շքանշանով, իսկ 1967 թ. հունվարի 9-ին Սովետական Միության Գերագույն Սովետի նախագահությունը, հաշվի առնելով Արտաշես Բալասիի Կարինյանի ակտիվ հասարակական-քաղաքական գործունեությունը, ծննդյան 80-ամյակի կապակցությամբ պարգևատրեց նրան Լենինի շքանշանով։

Զեկուցումից հետո հրապարակվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Արտաշես Կարինյանին Լենինի շքանշանով պարգևատրելու մասին։ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հ. Խ. Մարդարյանը ողջունեց հորելյարին և հանձնեց նրան հայրենիքի բարձրագույն պարգևը։ Ա. Կարինյանին հանձնվեց նաև Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգիրը, որով պարգևատրվել է նա իր ծննդյան 80-ամյակի կապակցությամբ։ Այնուհետև հրապարակվեցին մի շարք հուշահասցեներ՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահության և հասարակական գիտությունների բաժանմունքի, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական և ադրբեջանական ֆիլիալների, գիտությունների ակադեմիայի գրականության, պատմության, հնագիտության ու ազգագրության ինստիտուտների, լուսավորության, բարձրագույն դպրոցի և գիտական հիմնարկների արշավիության հանրապետական կոմիտեի կողմից։ Հին բոլշևիկների անունից Ա. Կարինյանին ողջունեց 1902 թ. ՍՄԿԿ անդամ Գ. Մելիք-Գրիգորյանը։

Վերջում հանդես եկավ հորելյարը, որը շնորհակալություն հայտնեց կոմունիստական կուսակցությանն ու սովետական կառավարությանը՝ բարձր պարգևի և մեծարման երեկոյի համար։

Ս. ԽԱՐՄԱՆԴԱՐՅԱՆ